

Փ Ո Ւ Ն Ձ

ԹԻԻ 1000

ՇԱԲԱԹ

1875 ՅՈՒԼԻՍ 12

ԱԶԳԱՅԻՆ

Փոքր Ասիոյ աղետալի սովուն ժամանակ, Հիւանդանոցի մեծարդոյ Հոգաբարձութիւնը՝ սովուն աղետից երեսէն մայրաքաղաքս փախստեայ բազմաթիւ թշուառ մերայիններ ազգային Հիւանդանոցի մէջ պատասպարած ըլլալուն համար, սովեւոց օգնութեան մասնաժողովը որոշած էր՝ իբր ի բաժին այդ թշուառաց, գումար մը նուիրել Հիւանդանոցի, և արդէն 50 լիրա տրուած էր: Արդ՝ այս անգամաւ 16 հատ բաժնեթուղթ (Բուժիչի երկաթուղոյ) նուիրեց՝ չվաճառելու, միայն տոկոսն առնելու, և վիճակահանութենէ շահած ատենը՝ ազգային վարչութեան կողմանէ սահմանեալ նպատակին գործածելու պայմաններով:

Այս առթիւ կ՛մանուցանեմք: Թէ օգնութեան մասնաժողովոյ ձեռօք մինչև ցարդ հաւաքեալ ստակին գումարն՝ հասած է 5500 լիրայի:

Վանայ Պողոս վարդապետի խնդիրն այս շաբթու ալ մնաց անլոյծ, քաղաքական ժողովոյ անգամաց մեծադոյն մասին բացակայ գտնուելուն պատճառաւ: Ինչպէս քանի մ'անգամ ալ այս պատճառաւ կարելի եղած չէ վերջնական որոշում տալ:

Արդ՝ այս չորեքշաբթի օրը ներկայ գտնուող քաղաքական ժողովականք որոշեր են, առաջիկայ չորեքշաբթի օրը անպատճառ վերջնական վճիռն արձակել՝ առանց մեծադոյն մասին ներկայութեան սպասելու: և միանգամայն որոշեր են բացակայ ժողովականներէն ըտտորագրութիւն առնուլ, որ առաջիկայ նստին ալ եթէ ներկայ չգտնուին՝ ընդդէմ արձակեալ վճռոյն բողոքելու իրաւունք չունենան:

Պատրիարքարանը առժամանակեայ կերպիւ պաշտօնէ դադարեցուցեր է թաղական խորհրդական մը, որ ամուսնական դատի մը փոխանորդ կանգնեցրէ, և դատը կորսնցունելէն յետոյ՝ իւր վրայ փոխանորդեալէն ամբաստանութիւն եղեր է թէ 25 լիրա առած է, Ս. Պատրիարքին, փոխանորդ Հօր և այլոց տալու համար:

Պատրիարքարանը միանգամայն որոշեր է գրել ոստիկանութեան, որ թէ՛ թաղական խորհրդականը և թէ՛ փոխանորդեալն հարցաքննութեան երթարկուին, որպէս զի ճշմարտութիւնը երևան ելնէ և յանցաւորը պատժուի:

Արժ. Տ. Գարեգին վարդապետ Արուանձաբանց՝ որ Զմիւռնիա կգտնուէր, տեղւոյն ազգային ժողովոց ընտրութեան նախագահելու պաշտօնով, այս

շաբթու դարձաւ մայրաքաղաքս. որովհետեւ՝ ըստ վերջին միահամուռ խընդրանաց ժողովրդեան, և հաճութեամբ Պատրիարքարանի նոյն պաշտօնը յանձնառերէ Տ. Գեորգ աւագ քահանայ տեղւոյն: Եւ լսեցինք թէ արդէն սկսեր են ընտրական գործողութիւնք, և արդիւնքը քիչ օրէն կիմացուի:

Զմիւռնիոյ քաղաքական ժողովոյ կողմանէ գիր մը արուեր է Սրուանձաբանց արժ. Տ. Գարեգին վարդապետի, որով շնորհակալութիւն կ'այտնեն նորա խաղաղասիրական ջանից ի Զմիւռնիա յաղութեան համար:

Պատրիարքական տեղապահ Տ. Նիկողոս Ս. Արքեպիսկոպոսի անակնկալ վախճանէն անմիջապէս յետոյ երևան ելած խնդիր մը, այսինքն թէ Աղթամարայ կաթողիկոս խաչատուր Սրբազան 500 լիրա արուած է Հանգուցելոյն, - այս օրերս կը վերջանայ: Գնութեան համար կարգեալ խառն մասնաժողովը տեղեկագիր մը կուտայ խառն ժողովոյն, որով կեղրակացունէ թէ խաչատուր Սրբազան և այլք բարեսիրաբար այսպիսի համբաւ մը հանած են, որպէս զի նոյնչափ գումար մը հանգուցելոյն ժառանգութեան առնելով՝ նորա վախճանեալ քեռ կարօտ որդւոց տան, և թէ՛ հետեւաբար՝ յայսմ մասին ո՛չ ոք մեղադրելի է, ինչպէս նաև հանգուցեալ Սրբազանը:

Մեք՝ այսպիսի լուրեր ու դէպքեր՝ ընդհանրապէս առանց դիտողութեան կհրատարակեմք, քաջ գիտելով թէ ընթերցողն դիւրաւ կրնայ դատել և վրձուել առանց որևէ միջնորդի:

Մայրաքաղաքիս գաղղիական դեսպանը հինգշաբթի օրը Գումգափուի Պատրիարքարանն եկաւ՝ ի փոխադարձ տեսութիւն ամեն. Ս. Պատրիարք Հօր բայց նորին Սրբազնութիւնն անձնական տրակարութեամբ նոյն օրը բացակայ գտնուելուն պատճառաւ՝ պատրիարքական փոխանորդ Հայրն ընդունեց զՆորին վանութիւնը, և կէս ժամու չափ տեսակցելէն յետոյ՝ մեկնեցաւ այցեւորման թողլով Ս. Պատրիարք Հօր համար:

Ասկէց 10 տարիի չափ ժամանակ յառաջ Պաղտասար անուն վարդապետ մը Չնքուշի վանուց վանահայրը կամ ուրիշ պաշտօնի մը վրայ գտնուելուն պատճառաւ, նոյն վանքին մէկ տարը իւր վրայ խոփոք ընել, այսինքն իւր անունն նշանակել տուեր է:

Արդ՝ այդ վարդապետն վախճանած ըլլալով, վրան գտնուած արար ճակատ համարուեր է, և աճուրդով պիտի վաճառուի եղեր:

Կլեմք, թէ այս խնդրոյն համար Պատրիարքարանը Բ. Դրան հետ բաւական բանակցեր է, սակայն վերջապէս յիշեալ պատասխանը արուեր է, այսինքն թէ ըստ օրինի ճակատ է, և աճուրդով պիտի վաճառուի:

Թո՛ղ լսեն այս ցաւալի դէպքը, ամեն անոնք՝ որ ազգային պաշտօններու վրայ կգտնուին. Թո՛ղ լսեն, և ամենայն զգուշութեամբ վարուին, որպէսզի մի դուցէ յապագային այսպէս ազգային վնասուց պատճառ լինին:

Գաղանձեան Աւետիս և Ստամպուլուեան կարապետ էֆէնտինները՝ Ելուժից հոգաբարձութեան, Հալաճեան Մեղքոն էֆէնտի՝ Վանօրէից խորհրդոյ, և Կիւմիւշեան Յովհաննէս էֆէնտի՝ Մուրատեան վարժարանի յանձնաժողովոյ անդամակցութենէ հրատեղտ տուեր են:

Սամաթիացիք այս օրերս նոր շարժում մ'ալ կընեն: Թաղական խորհուրդը՝ նկատելով որ վարժարանաց շինութեան յետոյ, եկեղեցւոյն շինութեան գործն բարձի թողի եղած է, - Պատրիարքարանէն խնդրեր է այս անգամ, որ յանձնաժողով մը կազմուելով՝ հանգանակութեան ձեռնարկուի ի շինութիւն եկեղեցւոյն:

Թաղական խորհուրդը միանգամայն ընտրելեաց ցանկ մը զրկեր է Պատրիարքարան, ի դիւրութիւն կազմութեան յանձնաժողովոյն:

Մազլըմեան Առաքել վարդապետ՝ մտտերս Սոյ վիճակէն մայրաքաղաքս գալու հրաման ստացեր է Սոյ կաթողիկոսէն, և Պատրիարքարանի հաղորդելով՝ անկից ալ թոյլտուութիւն կխնդրէ եղեր:

Այս վարդապետը թէ և անձանօթ չէ, սակայն այս առթիւ վերջին տեղեկութիւն մը տալ արժան կհամարիմք, որ ոչ նուազ հետաքրքրական է:

Սոյ կաթողիկոսն էր, որ յառաջագոյն գրեց Պատրիարքարան, թէ կարգուրաց է Առաքել Մազլըմեան, և ին և ին. Պատրիարքարանն ալ վերջապէս զանի երուսադէմ խրկեց յապաշխարութիւն. վարդապետը երուսադէմ փախաւ և համարչօկեցաւ զինքը ծանրապէս ամբաստանող Սոյ կաթողիկոսին վիճակն երթալ, նորա քով ապաստանիլ. և գողցես հրաշիւք իմն համաձայնեցան. կաթողիկոսը մինչև իսկ պաշտօններ յանձնեց վարդապետին. և այժմ Պէլէնի ժողովուրդն հեռագիր հեռագրի վրայ կթափէ Պատրիարքարան և թախանձանօք կպահանջէ Պէլէնի առաջնորդ կարգել զՄազլըմեան:

Ո՛րչափ արագ և հրաշալի դարձուած:

Չարչամպայի առաջնորդական տեղապահ արժ. Տ. Արիստակէս վարդապետ ալ մօտերս մայրաքաղաքս կուգայ, Պատրիարքարանէն կանչուած ըլլալով: Ժողովըրդեան մէկ մասն այս վարդապետին վրայ ամբաստանութիւններ կընէ. և վարդապետն ալ կըրոզքէ և դատ կպահանջէ:

Կարսէն յունիս 21 թուով գրուած նամակ մը մեծաւ ցաւով կ'ձանուցանէ՝ տեղւոյն Գրասիրական և Եղբայրասիրաց անուն երկու նորահաստատ ընկերութեանց բարեկարգ ու արդիւնաւոր վիճակի մէջ չգտնուիլը, և իւր կողմանէ ազդու յորդորներ կկարգայ առ յարգոյ անգամս յիշեալ ընկերութեանց, որ սթամբլին և օդտակար ընթացք մ'ընտրեն:

Նամակագիրն ցաւելու իրաւունք ունի արդարեւ, քանի որ գիտէ ընկերականութեան բազմադիմի օգուտներն, և յիշէ ի պակասիլ ընկերականութեան՝ քանի՛ մեծամեծ վնասք կհետեւին:

Կարսի առաջնորդական տեղապահ գեր. Հայրն անշուշտ քաջ գիտէ այդ ընկերութեանց ներկայ վիճակը. և անշուշտ գործունէութեան հրաւեր ու յորդոր կկարգայ, աջակցելով նոյա՛ ինչպէս անհրաժեշտ պարան է:

Մանիսայէն (առաջնորդական վիճակ Չմիւռնիոյ) յուլիս 4 թուով գրուած և ապահովագրեալ նամակ մ'առինք երկու օր յառաջ: Այս նամակին ստորագրութիւնը բոլորովին անծանօթ է մեզ:


Ի սկզբան համառօտ կ'ձանուցանէ՝ Մանիսայի ազգայնոց 500 ընտանիքէ բաղկացեալ, և երկու թաղի՝ ստորին և վերին՝ բաժանեալ լինելն: Սոյն թուոյն մեծ մասը՝ կըսէ, իբր 400 ընտանիք՝ ստորին թաղին կվերաբերին, և ունին մէկ եկեղեցի, և երկու դպրոց՝ Լուսաւորչեան ու Գայիանեանց անուամբ:

Այս համառօտ ծանօթութենէն յետոյ նկարագրուած է Գայիանեանց վարժարանի հարցաքննութիւնը, որ նախորդամայն 22 ին ընդ նախագահութեամբ Չօպանեանց Գարեգին վարդապետի տեղի ունեցեր է, և աշակերտուհիք ըստ բաւականին պատասխան տուեր են քերականութեան՝ թուարանութեան՝ ազգային պատմութեան՝ կրօնագիտութեան և յունարէն լեզուի մէջ: Հետեւեալ կիւրակէն, դպրոցին տարեդարձի ու պարգեւաբաշխութեան հանգէն կատարուեր է ի ներկայութեան խուռն բազմութեան հայ և յոյն արանց ու տիկնայց. աշակերտուհեաց ձեռագործք ի տես դրուած են եղեր. երգէ և ճառէ զատ՝ Սանդուխտ ողբերգութեան մէկ արարուածը ներկայացուցեր են աշակերտուհիք, և աւելորդապաշտութեան վրայ բանաստօութիւն մ'ըրեր են: Հանգէսը վերջացեր է ատենախօսութեամբ հայկաբանդասատուին Լուսաւորչեան վարժարանին:

Նամակագիրն՝ յետ այս տեղեկութեանց՝ ծանրապէս կգանգատի, ընդգէ՛մ թաղական խորհրդոյ տեղւոյն, ծանուցանելով թէ ներկայ չգտնուեցաւ ո՛չ հարցաքննութեան և ո՛չ պարգեւաբաշխութեան հանդիսին, և թէ՛ դպրոցաց առջեւէն անգամ չանցնիր, որ անոնց շուքը վրան չգայ:


Կգանգատինաև, թէ այդ թաղական խորհուրդը հրաժարեցոյց հայկաբանութեան դաստուռն, անասա՛ լիրբ ու լրկաի աշակերտ մը գանիւ պատժելուն և նորա ճակտին վրայ անգնաս վէրք մը տալուն պատճառաւ: Այս աշակերտը դըպրոցին անբարեկարգութեան միշտ պատճառ կըլլայ եղեր, և դասատուին հրաժարեցուցման պատճառաւ աշակերտք ցրուեր են:

Արդ՝ որովհետեւ նամակագիրն ի վերջոյ մեր դիտողութիւնը խնդրած է, կ'իտեմք դիտել, թէ թաղական խորհուրդն մեղադրելի է, եթէ արդարև ներկայ չէ գտնուեր հարցաքննութեան և պարգեւաբաշխութեան հանդիսին, քանի որ թաղային վարչութեան մը առաջին և անհրաժեշտ պարտաւորութիւնն է՝ վարժարանաց խնամ տանիլ և քաջաբերել ուսանողները: Իսկ դալով դասատուն հրաժարեցունելու խնդրոյն՝ թաղական խորհուրդն երբէք մեղադրելի չէ. մեք, ինչպէս նաև ամեն ողջախօհ անձինք բուրովին կմերժեն ուսանողաց դէմխօսութեամբ ու գանիւ վարուելու դժնդակ ու դժոխային սովորութիւնը. ծեծել և մինչև իսկ վիրաւորել ուսանող մը, երբէք ներելի չէ. ուսանող մը՝ եթէ վերջապէս առաջի ամենայն յորդորանաց ու խրատուց տակաւին ևս անուղղայ կմնայ, որ հազուադէպ է, վարժարանէն կարտաքսուի. ծեծել ու վիրաւորել զանի՛ չէ թէ ուսուցչի և դաստիարակի, այլ բարբարոսի և վայրենոյ գործ է, և բարբարոսն ու վայրենին՝ չէ՛ թէ վարժարանի մէջ ընդունիլ այլ վարժարանին առջեւէն իսկ անցունել, ըստ մեզ՝ քրէական ոճիր է:



Սամսունէն՝ յուլիս 5 թուով:
« 1. - Ծանկի Գուրչունլու - Տէտէ կամ Գապա-ճէվիլը ըսուած գիւղերէն 300 տունի չափ հայեր, թողլով իրենց հայրենիքը Ռուսաստան կը դաղթեն այս օրեր: Արդէն այն կողմերէն բաւական թուով անձինք գաղթած ու նիւթակաւնի մասին բաւական լաւ կացութեան մէջ են եղեր: Կըսուի, թէ այս նոր գաղթողներն ալ անոնց դիւրակեցութենէն հըրապուրուած են, թէպէտև շատերը կը հաւաստեն թէ՛ տրոց ծանրութենէն ներուելով միայն ստիպուած են գաղթել: »

« 2. - Թէպէտև նախորդ նամակաւ տեղւոյս երաշտութիւնը և անկէ ծագած բուսական բերքերու վնասներն գրած էի ձեզ, սակայն նախորդ ամսոյն 22 էն սկսեալ կանձրեւէ ցարդ անընդհատ: Այս անձրևոց վրայ, ծխախոտներն ոգի առին, և շատ երկրագործք ալ տունկեր գնել սկսան, վերստին տնկելու համար: Բաւական եղիպատացորեն ցանուեցաւ: Յորեանք ալ արդիւնաւոր կերպարանք մ'առին: »



... Խմբագիր
Անցեալ կիրակի Սալմաթօմրուքի Ազգ. վարժարանի մէջ 40 էն աւելի աշակերտք և ունկնդիրք գտնուեցան՝ որոնցմէ ոմանց տաճկերէն և ոմանց հայերէն և գաղղիերէն, թուարանութեան և ընդ. դասեր տրուեցան. և ինչպէս ըսեր էինք՝ մեծ Սեպուհ էֆ. Էսմէրեան ազդու ճառ մը խօսեցաւ, և պէտք եղած բա-

ցատրութիւնները խիստ գոհացուցիչ կերպիւ էին: Վաղը կիրակի 13 յուլ. կըրկին նոյն վարժարանը պիտի բացուի ժամ 1 ին և վերոյիշեալ ուսմանց դասախօսութեան յառաջ «կիրակի օրերը ինչ ընել պէտք է և թէ ընթերցանութիւնը մէկ ազգի մը յառաջադիմութեանը ո՛րքան օգտակար է» ի վրայ պիտի ատենախօսէ մեծ. Ռէդէոս էֆ. Թադէոսեան, և ապա դասախօսութիւնք պիտի աւանդուին մինչև ժամ 5 1/2:

Նոյնպէս Իւսկիւտար Ս. Խաչի վարժարանը ուսմանց և լեզուաց դասախօսութիւնք պիտի ըլլան ժամ 2 1/2 էն մինչև ժամ 6. ուր արժ. Վահան վարդապետ Պարտիզակցի «յայտնեալ ճշմարտութեանց» վրայ պիտի ատենախօսէ:

Ղալաթիոյ վարժարանն ալ ժամ 2 էն մինչև 10 հայ. տաճկ. գաղղ. լեզուաց, երաժշտութեան, թուարանութեան և ընդ. դասեր պիտի աւանդուին, ինչպէս ամեն կիրակի կըլլան: Խմբագիր, կ'ընդրեմ որ այս ծանուցումը հրատարակել բարեհաճիք, որպէս զի ով որ կիսափաքի իւր կիրակին օգտակար ընել, յիշեալ վարժարանաց ո՛րը իրեն յարմար կգատի, թո՛ղ հրամայէ, ուր իրեն ուզած լեզուն և կամ ուսմունքը կարող պիտի ըլլայ ձրիապէս ուսանիլ: Փափաքելով այսպիսի վարժարանաց թուոյն շատութեանը:

Մնամ ձերդ. Անձ. բարեկամ
12 յուլ. 1875 Գրչորոտար Ղալաթիոյն

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Այս օրերս բարձրապատիւ մեծ Եպարքոսին կողմանէ երկար շրջաբերական մը զրկուած է բոլոր կուսակալութեանց, որով կ'ձանուցանէ՝ կայսերական կառավարութեան ելուժող հաւասարակըչութեան համար պէտք եղած միջոցներն խորհելու և գործադրելու պաշտօնով կայսերական հրամանաւ իւր նախագահութեամբ բարձրաստիճան պաշտօնատարներէ մասնաժողովոյ մը կազմուած լինելն, և նախ քան զամենայն վերին աստիճանի պաշտօնակալաց ամսական թոշակաց զեղչման որոշումն, որով իւր 200 հազար զրուշ ամսականը 50 հազարի կիջնէ, և կուսակալութիւններն երկու կարգի բաժնուելով, առաջին կարգին՝ 25, իսկ երկրորդին՝ 20 հազար զլ կսահմանուի. առևտրական գործոց, հասարակաց կրթութեան նախարարաց, մեծ Եպարքոսի խորհրդականի, Բուսումաթի՛ Տէֆթէրխանէի և Պօլսոյ քաղաքապետին ամսականները 20 հազար կըլլան. սակայն դեսպանութեանց՝ Ֆէրիքու Միրիլիվա փաշայութեանց յատուկ թոշակներն անփոփոխ կմնան, ինչպէս նաև պայմանագրեալ թոշակք. և միայն 3000 էն վեր եղող ամսականներէ կզեղչուին՝ սկսեալ ներկայ յուլիս ամսոյս 1 էն, այսինքն՝ 3000 էն վեր եղող մասին կէսը:

Եպարքոսական շրջաբերականը այս առթիւ կ'ձանուցանէ, թէ պաշտօնակալաց հրաժարման ու հաստատութեան վերաբերեալ կանոնադրութիւն մ'ալ խմբագրուելու վրայ է, որպէս զի պաշտօնները ապահովուին, և մշտափոփոխ վիճակի մէջ չգտնուին:
Նաև՝ կազդարարէ, թէ այս զեղչման պատճառաւ, անհաւատարմութեան մէջ

գտնուող պաշտօնատարք խստիւ պիտի պատժուին ըստ օրինի :

Ի վերջոյ կպատուիրէ կուսակալութեանց , որ իրենց վիճակին մէջ կարելի եղած խնայողութեան միջոցները խորհելով շուտով հաղորդեն Բ. Դրան , որպէս զի պէտք եղած տնօրինութիւնն ըլլայ :

Լուր կայ , թէ Շուրայի-տէվլէթի անդամոց թիւն ալ պիտի պակսի , ամասականները պիտի զեղչուին , և նախագահութեան պաշտօնը բարձրապատիւ մեծ Եպարքոսը պիտի վարէ : Բոլոր անդամոց թիւը 20 պիտի ըլլայ , չորս մասի պիտի բաժնուի . անդամոց՝ որ արժանաւորագոյնք պիտի ընտրուին , 5000 , իսկ նախագահաց՝ 7500 ակն զըշ ամսական պիտի տրուի . այսպէս ամիսը 100 հազար զըշ բաւական կըլլայ , մինչդեռ այժմ տարին քանի մը միլիոն ծախք կերթայ եղեր :

Բ. Դրան տպագրական դիւանին գլուխ կարգեցաւ նոյն դիւանին անդամներէն Պառնասեան Պողոս էֆէնտի՝ երկրորդ աստիճանի երկրորդ կարգի պաշտօնատարութեամբ :

— Երկրորդ աստիճանի Մէճիտլիէ պատուանշան տրուեցաւ՝ ոստիկանութեան գործոց նախարար Ահմէտ Համտի փաշայի :

— Պեճիկ թագաւորը առաջին աստիճանի պատուանշան ընծայեր է՝ Եգիպտոսի բարձրապատիւ Խտիվին գահաժառանգ որդի վսեմաշուք Մէհմէտ թէվֆիգ փաշայի , ի ձեռն ընդհանուր հիւպատոսին Գահիրէի :

— Լնտոնի օսմանեան դեսպան Միւզիւրիս փաշա ընտանեօք հանդերձ փարիզ ու Պրիւքսէլ երթալու համար իւր պաշտօնատեղիէն մեկնեց , և փոխանորդ թողեր է իւր որդին՝ որ արդէն դեսպանատան գլխաւոր քարտուղարն է :

— Գահիրէի և Աղեկականգրիոյ մէջ ալ ստակ կհաւաքուի ինպատ կարօտ ուղղելոց Գաղղիոյ , և արդէն 23 հազար ֆրանգի հասեր է :

— Ոստիկանութեան պաշտօնատուէն դեսպանատանց հաղորդուելով կալուածական տուրքը չվճարող օտար հպատակաց անուանքը , առաջարկուեր է պատուիրել որ օր յառաջ հատուցանեն :

— Կըսուի , թէ մայրաքաղաքիս աւերտրիական դեսպանը պիտի փոխուի Բուսթիլի երկաթուղոյն խնդրոյն պատճառաւ :

— Բուսթիլի երկաթուղոյն արտօնատէր Պ. Հիլլի մայրաքաղաքս գալուն լուրը՝ զոր այլոց հետ մեք ալ հրատարակեցինք՝ չհաստատուիր :

Երէկ երեկոյ , ժամը 1 ին ատենները , Պէյօղլու մեծ փողոց Տէօրթ-եօլաղը հրդեհ պատահելով՝ 12 ի չափ մեծ տուներ մոխիր դարձան :

— Իւսկիւտար թօփհանէի-օղլի երեքըշաթի առաւօտ այգի մը կայծակ իջնելով , երկու աղախնայց պատահեր է , որոց մին՝ անմիջապէս մեռեր , և միւսը չարաչար վիրաւորուեր է :

Սէլանիկի կուսակալութենէն մինչև տարի մը արջառ դուրս հանելն արդիւ-

ուեր է , որպէս զի արջառոց հիւանդութեան պատճառաւ եղած վնասուն տեղը լցուի այսպէս :

— Դանուբեան կուսակալութեան գաւառական լրագիրն կգրէ : — Յունիս ամսոյ 24 ին , ճիւմայի մէջ ահագին փոթորիկ մ'եղնելով , և անձրև ու կարկուտ գալով՝ 200 տարուան մեծամեծ ծառեր հիմնախիլ եղան . բոլոր շինուածոց ապակիները կոտորեցան . և ուրիշ աւեր ու վնասներ տեղի ունեցան , ինչպէս նաև երկու մարդիկ զոհ գացին :

— Հէրսէքի դիւղացիներէն ոմանք՝ կառավարական տուրք վճարել չուզելով ապստամբած , և ուրիշներն ալ գըրգռած , ու յորդորանաց ու խրատուցական զբաժնի կառավարութիւնը ստիպուեր է խիստ միջոցներ ի գործ դրնել ընդդէմ նոցա :

Այս մասնաւոր դէպքը ի սկզբան Եւրոպիոյ մէջ իբրև մեծ ինչ նկատուեր է , բայց ի վերջոյ ստուգուեր է կարևորութեան արժանի չ'ըլլալ :

— Մօտերս 36 հելլենացի աւազակաց խումբ մը Միտիլի անցնելով՝ տեղոյն երևելիներէն մէկուն տունը կոխեր , 1030 լիրան առեր , և օգնութեան եկող անձանց մէկ քանին զարկեր ու յաջողեր են փախչիլ : Տեղական կառավարութիւնն իսկոյն յատուկ շոգենաւ մը հաներ է այս չարագործաց ետեէն :

— Տրապիզոնի մէջ թէքֆուր-չայըր թաղը 133 տարեկան կին մը կգտնուի , տակաւին երբէք մարմինն ու միտքը չը տկարացած : Սա երբեմն երբեմն շուկայ կենէ , և առտնին պիտոյք կհոգայ եղեր : Երկու աղջիկ ունի , բայց չարաչար կնախատեն ու կհալածեն զինքը , մանաւանդ երկարակեցութենէն գանգատելով՝ մինչդեռ բնութիւնը այդ հազուագիւտ շքնորհն ըրած է այդ կնոջ :

— Բուսթիլի մէջ , բազմաթիւ ժողովուրդ գլուխն ունենալով երևելի և ազդեցութեան տէր անձինք՝ իշխանութեան պաշտօնէից և նոյն իսկ իշխանին դէմ կգանգատին՝ Աւստրիոյ հետ հաստատեալ առևտրական գաշնադրութեան համար , զոր երկրին վնասակար կհամարին : Այս երկրէն տրուած տեղեկութեանց նայելով՝ մօտերս ծանր յեղափոխութիւն մը պիտի պատահի : Իշխանութիւնը այժմէն զգուշութեան խիստ միջոցներ ձեռք առած է :

— Բուսթիլի իշխանութեան կողմանէ հրատարակեալ վիճակագրութեան մը նախելով , Բուսթիլի մէջ 600 հազար ձի , 2 միլիոն 900 հազար արջառ , 5 միլիոն ոչխար , 500 հազար այծ կայ , և ամեն տարի Աւստրիոյ ու Գերմանիոյ համար շատ եզն դուրս կհանուի եղեր :

Եամանտօբօլօ անուն հելլենացի մը՝ որ 18 տարի յառաջ Հնդկաստան գացած է եղեր , այս անգամ հայրենիքը՝ Յունաստան դարձեր է , կէս միլիոն լիրայի հարստութեամբ ճոխացեալ , և անդրիացի օրիորդի մը հետ ամուսնացեալ և որդուոց տէր եղած : Սա որոշած է եղեր , հասարակաց օգտակար շինութիւններ կառուցանել , ինչպէս նաև հանգիստ , դպրոց , և այլն :

— Կըսուի , թէ Աւստրիոյ նախորդ

Ֆէրտինանտ կայսեր անձնական հարբստութիւնը ելած է 15 միլիոն լիրա , որոյ կէսը՝ կալուած , և միւս կէսը՝ արժէթուղթ է եղեր : — Ժառանգորդը՝ ներկայ կայսրն է :

Ֆէրտինանտ կայսրը մեռնելէն յառաջ , իւր տիկնոջ միջոցաւ հեռագրով իւր մեղաց համար ներում խնդրեր է Հռոմայ Պապէն , և նա ալ անմիջապէս հեռագրով ծանուցեր է՝ իւր մեղաց ներեալ ըլլալն :

— Զվիցերիի ճէնովրա քաղաքին մէջ այս օրերս ահագին փոթորիկ մը պատահեր է , որ հետեւեալ կերպիւ կնկարագրի : Հաւկիթէ խոշոր կարկուտ գալով՝ բոլոր տուններուն ապակիները ջախջախեր , կառավարական պաշտօնատանց շատը վնասուեր , և պարտէշներն բոլորովին ապականեր են : Քաղաքին մօտակայ գիւղի մը շատ տուները փլեր և քանի մը մարդիկ ալ զոհ գացեր են : Ծաղիկ , պտուղ և կանաչեղէն երբէք չէ մնացեր քաղաքին մէջ : Նոյն պահուն , բոլոր տուները ողողելով՝ բնակիչք դուրս ելեր են : Շատ անասունք ջրահեղձ եղեր են : Վերջապէս ամբողջ քաղաքը՝ գրեթէ աւերակ դարձած է , և քանի մը միլիոն ֆրանգի վնաս եղած է :

— Գաղղիոյ մէջ մինչև ցարդ և միւ փըրանգի չափ ստակ ժողովուեր է , ինպատ ողողեալ կարօտ գաղղիացոց :

— Անգղիոյ մէջ , անցեալ տարի 2 միլիոն 405 հազար լիրայի դրամ տպուեր է :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
Յուլիս 11

Քօնստիտէ	44-25
Սօսիթէ ժէնէրալի բաժինք Անգ. լիր.	7-4
Քրէտի » » Օսմ. »	9,25
Երկաթուղեաց » » ֆր.	124,25
Թրամուէյ Օսմ. լիր.	5,
1865 ի փոխառութիւն ֆր.	552,
1865 ի » »	534,
1869 ի » »	271,
1872 ի » »	79,50

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻՒՆՔ
—
20 ՃԵՂԷՐԷ
ՀԵՏԻՅԷ

Տաճկերէն լեզուին հմուտ նշանաւոր ազգայնոյ մը գրչէն ելած է՝ տաճկերէն լեզուին համար դիւրուսոյց ընթերցարան մը յիշեալ անունով՝ որ բազմաթիւ օգտակարագոյն նիւթերու վրայ տեղեկութիւններ կպարունակէ հանդերձ պատկերներով , և միանգամայն կարեւոր խորատներ կաւանդէ : Կառավարկեմք ազգային վարժարանաց տաճկական լեզուի յարգոյ ուսուցչաց , որ այս ընտիր ընթերցարանը տան ուսանողաց ձեռքը : — Գինն ալ աժան է , այսինքն՝ 5 դրուշ , և կգտնուի ամեն հայ գրավաճառաց խանութներն ալ :

ՄՈՒՇԵՂ ԵՒ ԿԱԼԻՆԻԿԷ
ԿԱՍ

ՊԱԿ ՄԸ ՅԱՆՁՐԴԻ
Գրեւ է Յովնան Ս. Մարտիկ Մալիբոյոյ
Այս գեղջկական վիպասանութիւնը , իւր պարզ օճովն ու հետաքրքրական տեղեկութիւններով , ընթերցասէր ազգայնոց ուշագրութիւնն առ ինքն գրաւելու և նորա յարգոյ հեղինակը քաջալերելու արժանի գիրք մ'է :

Սոյն գրքին կերպրանատեղին է , Մերձան-չարչըն Ֆրէնկեան գրատունը , ուր կը գտնուին նաև , Ալաճա համամ , լամ

պաճի ցարութիւն աղա Չախմիշեանի
խանութք. Բերա, ծխախմբա Ստեփան
աղայի խանութք և բոլոր գրավաճառաց
խանութքերը: Գին կէս մէճիա:

**ԻՆԻՑԱԶՆՈՒԹԻՒՆՔ ՄԵՄԻՆ ՎԱՐԴԱՆԱՅ
ԵՒ ՎԱՀԱՆԱՅ ՄԱՄԿՈՆԵՒՅ**

Եւ նկարագրութիւն Անի սաղարի, և ստանի ի
Յանայ

Իրեաց Տիգրան Գ. Գալստամանեան
Գինն է 5 զրուշ, և կծախուի հայ գը-
րավաճառաց խանութները:

Հեղինակն, իւր այս աշխատասիրու-
թեան վերջին երեսին մէջ կղեկուցանէ,
թէ « ֆրիստանտիստիւն և լուտերական
Հայեր» վերնագրով գրքոյի մ'ալ ունի
հրատարակելի, և շուտով իւրոյ պիտի
ընծայէ՝ եթէ գրամական միջոցն թող-
լադրէ:

**ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀՆԴԱՍՍԱՆՈՒ
ՀԵԹԱՆՈՍ ԿՈԱՊՈՒՇՏԻՑ**

Թարգմանեալ անգլիականէ՝ Հրոյ. Յ. Քէյպրեանէ

30 պատկերներէ բաղկացեալ այս գըր-
քոյը կը պարունակէ բնիկ հնդկաց կը-
րօնքին, այլևայլ կուռքերուն և կրօ-
նական սնապաշտ սովորութեանց վրայ
համառօտ տեղեկութիւններ: Այս տե-
ղեկութիւններն, ինչպէս նաև այն սո-
վորութեանց վերաբերեալ քանի մը պատ-
մութիւններ, թէև սոսկալի՝ շատ հետա-
քրքրական են սակայն, միանգամայն
խրատական, քանզի ազդու կերպով կը
ցուցնեն տգիտութեան պատճառաւ կը-
րօնական նախապաշարմանց մատնուած
ժողովրդաց ողբալի վիճակը, որմէ գի-
տութիւնը և կրթութիւնն ազատած են
աշխարհին լուսաւորեալ ազգերը:

Համագրեաց ուշադրութիւնը մասնա-
ւորապէս կը հրաւիրեմք այս տեսարակին
վրայ, որ կը գտնուի Հայ գրավաճառաց
քով, և որոյ գինն է 4 զրշ:

Կ'գրանատեղի՝ Ֆրէնկեան գրատուն:

**ԼՈՒԾՈՒՄՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՈՅ
ԱԿՆԱՅ ԲՈՂՈՒՄԿԱՆԱՅ**

Աս անցի և համօրէն բողոքական աղագայնս

Կրօնական ժողովոյ անդամ և իւսկիւ-
տարի Ս. Խաչ եկեղեցւոյ քարոզիչ՝ տիգ-
րանակերտցի արժ. Տ. Յովհաննէս Ծ.
վարդապետ փառալուստ գրած է այս
տեսարակը, պարզ ու հասկանալի ոճով,
և կրնայ օգտակար ըլլալ շատերուն՝ մա-
նաւանդ ներկայ ժամանակին մէջ, յու-
րում բողոքականութիւնը մեր ազգին
մէջ տարածելու մեծ փոյթ կտեսնուի:
Գինն է 4 զրշ:

**ՀԱՄԱՌՕՏ
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ
ՀԱՅ ՏԱՌԵՐՈՎ**

Յանաբէն. Գաղղեաբէն. Անգլիաբէն
և Թուրքիբէն

Սոյն օգտակար գրքուիը՝ որ երկրորդ-
անգամ տպագրուած է շատերուն խնդ-
րանացը համեմատ տնօգլիարէնն ալ ա-
ւելցած, կը վաճառի ի գին 5 զրուշ,

Մերձան չարչի Յ. Մարգարեանի գը-
րատունը և ամեն գրավաճառաց քով:

**ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ
ԲԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ՅՈՒՆՍԵՐԷՆԻ
ԵՐԿԱՍԻՐԵԱՅ**

Եղբար Մարտեան
Երբորդ Գրագրութիւն

Ամեն հայ գրավաճառաց խանութներ-
ը կը գտնուի, ի գին մէկ ֆրանգ, 80
սանթիմ:

ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ

Իւսկիւտար Պաղար-պաշքի մեծ փո-
ղոցին ետևը Սիւլէյման-փաշա փողոցը,
12500 կանգուն օդատուն և զեղեցկա-
գիր գետին մը ամբողջովին ծախու է,
որոյ մէջ ջրհոր մ'ալ կայ:

Ուզողը կրնայ մանրամասն տեղեկու-
թիւն առնուլ իւսկիւտար Թարա-պաշք-
ճատէ թիւ 236 տունը Կեոարացեան
ցարութիւն աղայէն:

Տաճկերէն լեզուի ուսման համար գըր-
քոցական ամեն տեսակ գասագիրք՝ չա-
փաւոր գնով կը գտնուի, Պօլիս կամուլին
գըրուիը Պարագան:

Պօլիս, Պաղչէ գաբու, Թաշխան,
տոպրակի ընտիր ձէթ կծախուի, որչափ
որ ուզուի:

Նաև կը գտնուի Պրուսայի 10 տարեկան
չեփուած ընտիր գինի, որ մարմինը կը օ-
րացունէ և կ'ազդուրէ: Բժիշկը հիւան-
դաց ու վատաւողիներու կ'ապտուիրեն՝
այս գինին:

Ինսան արիզ օլան սըզը իլլէթի սօղուք-
տան հասը օլմագ իսէ տէ պու քէմիք իլինտէ
հէնուզ պիր սարը սուտան իպարէթ օլուպ
ֆագաթ պուռուն պաղըսը վաղթը կէյմիլ վէ
լայըզըլա թէմէլ թութմուզ վէ պաղըսը էթ
իլէ քէմիք արասընտա գալմըշ աղըըյա պաշքա-
նա մալուճէ օլունմագ վէ հըֆուըյա Ալահ
թապեա նուզուլ իլլէթիտէն վէ մէրագտան
միւնազատան արիզ օլան ելլտէն պաշքա եա-
լընըզ սօղուգտան հասը օլան սօղուզ օն սէնէ-
լիք տալի օլատա՝ երնէ չարէսի պուլունմագ
վէ էօքսիւրիկէ վէ կէօքիւս թըքանըկընա պէլ
կէվէկիլի վէ մազաթտա քէյտահ օլան սըզըլը
մայասըլա մալուճէ վէրմէք իւզրէ սարըլըտա
քէսիլ մէշհուր Ուստա Սիմօն պուլունուր Մահ-
մուտ-Փաշա ճամիսիին ավուսունտա օրթատա-
քի գահվէտէ իքթիւգ իտէնլէրին գահվէի մէզ-
քիւրտէ կէլմէլէրի վէ իճապընա կէօրէ Թարիֆ
վէ էսփիլէսիին պագմագ իչուն պուլունտան աղ-
տէմ իլան էթմիլ իսէտէ մէզքիւր իլլէթիլին
իլավէսի իլին պու քէրրէ երնէ իլան իտէր:

Վէ սըզը իլլէթի 24 սասթտա աղըսըլը չը-
գարըլըմ վէ գասըզ իլլէթիին իճրասընտա
պուլունուրուզ:

Գարնընա պատուր օլան պիլ սանճը վէրիլ
իսէ օնունտա իճրասընտա պուլունուրուզ: Ս.

Կիզրոսի ազնիւ և սննդարար գինին՝ որ
մարմին և արիւն զօրացնելու և ստամոքսի ոյժ
տալու համար, շատ անգամ փորձուած և շատ
օղուտներ տեսնուած է, 5 էն՝ մինչև 20 տարե-
կան, և Անգլիանուպուլոյ ազնիւ և մաքուր՝ 2
էն մինչև 10 տարեկան, և ուրիշ քանի մը տե-
սակ զուտ և մաքուր գինիներ և խաղողէ քաղ-
ուած զուտ և պատուական օղիներ և մանիշակէ
զուտ և մաքուր շինուած պատուական օշարակի,
որ մարդու շատ օգտակար է, զմեւ շիշէնթօ
րով և չափաւոր գիներով կը ծախուի Կ. Պօլիս
Թահմիլ փողոց թիւ 9 մաղազան, և Բերա Պօ-
մարչէի գինաց Գ. Գըլըճեանի մաղազան: ՕՐ
մարքայով չգիտուածներն՝ երաշխաւորեալ չեն:
Կը գտնուի նաև՝ չայէ քաղուած ընտիր օղի,
և ձէթ՝ խիստ ընտիր տեսակէն:

ՏՈՒԹԻՕՐ Մ. ՓԱՓԱԶԱՆ

Իր բնակութիւնը հաստատած է ի
Ղալաթիա, Հայոց եկեղեցւոյ փողոց
թիւ 12 տունը, ուր պատրաստ է ամէն
օր մինչև կէս օր հիւանդ ընդունիլ, և
երեքշաբթի օրերն ալ ձրի դարմանել:

Հին գինի 8 տարուան՝ նաև օղի այլ և
այլ տեսակ խիստ ընտիր և անարատ, զուտ
խաղողէ շինուած, կ'ծախուի դիւրամատ-
չեղի գնով, Չօրապէի խան Բանտէլիի գը-
սարանը:

PILULE HOLLOWAY

ԴԵՂԱՀԱՏԻ ՀՈՂՈՒԹԻ

Լեարդի, ստամոքսի, և աղիքներու ամեն
տեսակ անկարգութեանց համար խիստ ընտիր
է սոյն զեղանկաւ, նաև յղային տկարութեան,
ուժաթափութեան և տխրութեան համար. կը
ընչէ և անհետ կընէ ամեն տեսակ անշարժու-
թեանց հետքերը: Սրտի և երկիւմանց վրայ
օգտակար ազդեցութիւն մ'աւելի. արիւնը մաք-
րելով նոցա խանգարեալ վիճակը կը կանոնա-
ւորէ, և գրգռելով կենսական գործարանները
կը զօրացնէ: Իւր զեղական մեծ ազդեցու-
թեամբ սրտախառնութիւն, կուժուութիւն,
մաղձային հիւանդութիւններ, որովայնի մէջ
լեզուած կաղեր, գլխի ցաւեր կը վանէ. մար-
սողութիւնը կը չափաւորի, և մարմինը մաք-
րուելով թոյլը այն ազտեղութիւններէ՝ որ շատ
անգամ գանազան հիւանդութեանց սկզբնա-
պատճառ կըլլան, առողջ, ուժեղ, և բնական
զիրքը կը գինուի:

ONGUENT HOLLOWAY

ՍՊԵՂԱՆԻ ՀՈՂՈՒԹԻ

Մորթային հիւանդութիւնը և վէրք բուժե-
լու մասին ունեցած պաշտամական յատու-
թեանցը չհաւասարի բնաւ ուրիշ դեղ մը. հին
կամ նոր թոււաւոր վէրքեր, ուռեցք, քաղց-
կեղ (չիրիֆէյն), սրունից և ստեանց վէրքեր
կամ բոլորովին կանցնին և կամ կ'աւանան.
օգտակար է նաև հարբուի, հաղի, սրտի
բարխման, մանաւանդ օդացաւ (եէլ) ըսուած
հիւանդութեան: Իւր կազդուրիչ և զօրաւոր
ազդեցութեամբ խոյլ (սըրանա) հիւանդու-
թեան ապականիչ զօրութիւնը ինչ աստիճան
որ ըլլայ՝ կը դիմագրաւէ:

Այս զեղեղուն գործածութեան եղանակը
նշանակուած է իւրաքանչիւր տուփի վրայ, որ
կը գտնուի ամեն դեղավաճառներու քով, և
մասնաւորապէս Պահճէ-գափու Թաշխանի կող-
մերը Պ. Գասապեանի դեղարանը՝ Նօ. 7 կը
ծախուի:

Աւելի առնել ուզողը կը հրաւիրուի առ հե-
ղինակն տըքթոր Հոլուուէ Ի Լոնտոն Սըրսֆորտ
փողոց թիւ 555:

ՊԱՏՄԱՆՔ ՓՈՒՆԶԻ

- 1.—Փուշը 2ՈՐԵՔՇԱԲԹԻ և ՇԱԲԱԹ օրերը
կը հրատարակուի:
- 2.—Տարեկան բաժանորդագինն է միայն չորս
արծաթ մէճիտ՝ կանխիկ վճարելի թէ՛ մայրա-
քաղաքիս և իւր արուարձանաց և թէ՛ գաւա-
ռաց համար:
- 3.—Վեց և երեք ամսոց համար ալ բաժա-
նորդ կը դիմագրուի:
- 4.—Տեղական ու գաւառական թղթատա-
րութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ:
- 5.—Հատը 40 փարայ է, և կը գտնուի ա-
մեն Հայ գրավաճառաց խանութները և ձեռքէ
ծախողներու քով:
- 6.—Մանուցման տողը 3 զրուշ է մէկ
անգամի համար: Աւելի աժան կըլլայ աւելի
անգամներու համար:
- 7.—Խմբագրութեան վերաբերեալ որ և է
գիր ուղղելի առ Տնօրէն-Տէր Հ. Ս. Ալաճաճեան,
Կ. Պօլիս Ալաճա-Համամ Թալի խան միջին յարկ
թիւ 19:

**ՏՆՕՐԷՆ ԵՒ ՏԵՐ
Հ. Ս. ԱԼԱՃԱՃԵԱՆ**

ՏՊԱԳՐ. Ս. Գ. ՊԱՏԻՉՊԱՆԵԱՆ ԵՒ ԱՆԿԵՐԻ
Բիգա փաշա խան թիւ 3